ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մրցույթ՝ ՀՀ Կոտայքի մարզի << Լեռնանիստի Ս. Նազարյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի <<Հասարակագիտություն>> (8 -դասաժամ), <<Ֆրանսերեն>> (11 -դասաժամ), և <<ՀԵՊ>> (3 -դասաժամ) առարկաների ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1. Դիմում (ձև 1), մեկ լուսանկար 3x4 չափի

2. Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ)

3. Անձը հաստատող փաստաթուղթ

4.<<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում)

5. Ինքնակենսագրություն (Ձև 5)

6.Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ

7. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ

8. Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում)

9. Որակավորման տարակարգ՝ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2024թ-ի սեպտեմբերի 23-ից մինչև հոկտեմբերի 4-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2024թ. հոկտեմբերի 8-ին՝ ժամը 11^{00}-ին, Կոտայքի մարզի Լեռնանիստի Ս. Նազարյանի անվան միջնակարգ դպրոցում, հասցեն՝ գյուղ Լեռնանիստ, 1-ին փողոց, շենք 33 :

Տեղեկությունների համար զանգահարել՝ (094) 63-26-62 հեռախոսահամարով: